

5.4. 2007թ. նոյեմբեր ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2007թ. նոյեմբերին ունեցել է հետևյալ բնութագիրը.

Օդային ավազանի որակի մոնիթորինգ: Նոյեմբերին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 13 մշտական լաբորատոր դիտակայանների և Ծաղկաձոր քաղաքի պասիվ մոնիչառման 14 դիտակետի միջոցով:

Մթնոլորտային օդի 3781 փորձանմուշներում որոշվել են հիմնական աղտոտիչ նյութերի՝ փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի, բենզոլի, տոլուոլի, քսիլոլի, էթիլ բենզոլի, քլորոպրենի և գետնամերձ օզոնի պարունակությունները:

Մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգի անցկացման համար տեղակայված դիտակայանների և վերցված փորձանմուշների քանակական բաշխվածությունը ըստ քաղաքների, 2007թ. նոյեմբեր

(միավոր)

	Դիտակայանների քանակը	Դիտակետերի քանակը	Փորձանմուշների քանակը
Երևան	5	-	1769
Արարատ	1	-	78
Ալավերդի	2	-	572
Վանաձոր	3	-	1066
Գյումրի	1	-	78
Հրազդան	1	-	78
Ծաղկաձոր	-	14	140
Ընդամենը	13	14	3781

Երևան քաղաքի մթնոլորտային օդում հոկտեմբեր ամսվա համեմատ գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 2.0, ծծմբի երկօքսիդինը՝ բարձրացել 1.5 անգամ:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ) ք.Երևանի մթնոլորտային օդում, 2007թ. նոյեմբեր

(մգ/մ³)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	1.23	0.11	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.17	0.06	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.224	0.094	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.16	0.05	0.40	0.06
Գետնամերձ օզոն	0.072	0.031	0.16	0.03
Բենզոլ	0.054	0.002	1.5	0.1
Տոլուոլ	0.811	0.057	0.6	0.6
Քսիլոլ	0	0	0.2	0.2
էթիլ բենզոլ	0	0	0.02	0.02
Քլորոպրեն	0	0	0.02	0.002

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.6 անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ:

Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում հոկտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.5, տոլուոլինը՝ 1.7 անգամ:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց ՍԹԿ-ները ք.Վանաձորի մթնոլորտային օդում, 2007թ. նոյեմբեր

(մգ/մ³)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	0.86	0.15	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.94	0.08	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.110	0.044	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.08	0.03	0.40	0.06
Բենզոլ	0.590	0.068	1.5	0.1
Տոլուոլ	2.290	0.737	0.6	0.6
Քսիլոլ	0	0	0.2	0.2
Էթիլ բենզոլ	0	0	0.02	0.02

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.2 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 2.2 անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել:

Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում հոկտեմբեր ամսվա համեմատ որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների էական փոփոխություն չի դիտվել:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց ՍԹԿ-ները ք.Ալավերդու մթնոլորտային օդում, 2007թ. նոյեմբեր

(մգ/մ³)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	-	0.16	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.82	0.58	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.094	0.075	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.07	0.06	0.40	0.06

Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 6.2 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 9.7 անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել:

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է 9.3 անգամ ցածր ՍԹԿ-ից, ազոտի երկօքսիդինը՝ 4.9 անգամ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ: Նոյեմբերին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 18 գետերի, Ախուրյանի և Ազատի ջրամբարների, Երևանյան և Սևանա լճերի 61 դիտակետերից: Վերցված 70 փորձանմուշներում որոշվել է 20-26-ական ցուցանիշ: Դիտարկման արդյունքներն ըստ մակերևութային ջրերի վերահսկվող հատվածքների և աղտոտիչ նյութերի, ստացել են հետևյալ պատկերը.

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2007թ. նոյեմբեր

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները					
			լուծված թթվածին (ՍԹԿ՝ 6.0 մգ/լմ ³ -ից ոչ պակաս)	ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3.0 մգ/լմ ³)	միտրատ իոն (ՍԹԿ՝ 9.0 մգ/լմ ³)	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգ/լմ ³)	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգ/լմ ³)	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/լմ ³)
Փամբակ	4	Վանաձոր քաղաքից 4.5 կմ ներքև	-	6.21	-	0.040	1.01	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	4.18	-	0.032	0.67	-
	6	Այրում քաղաքից 0.5 կմ վերև	-	-	-	0.038	0.59	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	-	4.69	-	0.032	0.51	-
Ձորագետ	10	Գետաբերան	-	-	-	0.030	0.84	-
Մարցիգետ	13	Գետաբերան	-	4.46	-	-	0.59	-
Ախթալա	14	Գետաբերան	-	4.50	-	-	0.84	742.6
Աղստև	15	Դիլիջան քաղաքից 1.2 կմ վերև	-	-	-	-	0.48	-
	16	Դիլիջան քաղաքից 0.5 կմ ներքև	-	-	-	-	0.57	-
	17	Իջևան քաղաքից 1 կմ վերև	-	-	-	-	0.57	-
	18	ՀՀ պետական սահմանի մոտ	-	-	-	-	0.61	-
Գետիկ	20	Գետաբերան	-	-	-	-	0.70	-
Արաքս	26	Հրազդան գետի թափման կետից վերև	-	-	-	-	-	145.6
	27	Հրազդան գետի թափման կետից ներքև	-	-	-	0.046	-	159.6
	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	-	3.30	-	0.026	-	167.1
	29	Ագարակ քաղաքից 2 կմ հարավ	-	3.70	-	-	-	143.7
	30	Ագարակ քաղաքից 2.5 կմ հարավ-արևելք	-	4.00	-	0.026	-	185.7
Ախուրյան	35	Երվանդաշատ գյուղից 0.5 կմ ներքև	-	3.40	-	-	-	-
Հրազդան	55	Դարբնիկ գյուղի մոտ	4.00	6.20	10.54	0.197	11.92	197.0
	56	Գետաբերան	-	3.10	10.01	0.110	1.51	164.3
Գետառ	59	Գետաբերան	-	4.50	9.74	0.125	3.91	-
Ողջի	93	Կապան քաղաքից 0.8 կմ վերև	-	3.50	-	-	-	-
	94	Կապան քաղաքից 6.8 կմ ներքև	-	3.80	-	-	-	155.8
Արծվանիկ	96	Գետաբերան	-	4.30	-	0.026	-	185.7
Գեղի	97	Աջաբաջ գյուղից 0.5 կմ վերև	-	3.50	-	-	-	-
Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	-	3.80	-	-	-	-
	101	Սիսիան քաղաքից 2 կմ ներքև	-	-	-	0.026	-	-
Սիսիան	104	Գետաբերան	-	3.50	-	-	-	-
Գորիսգետ	106	Գորիս քաղաքից 3 կմ վերև	-	-	-	0.031	-	-
	107	Գորիս քաղաքից 1.5 կմ ներքև	-	-	-	0.192	0.56	-
Ախուրյանի ջրամբար	110	Ամբարտակի մոտ	-	-	-	0.030	-	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակից գետի հոսանքով ներքև	-	-	-	0.053	-	106.3